

Eglise apostolique

23-ին առաջնորդ

Հայր Սուրբը նախագահեց Սուրբ
Պատարագին, որը հոգեւոր
մխիթարութեան պահ էր ներկայ
հաւատացեալներու համար:

Ֆրանսայոց Թեմի առաջնորդ Հոգեշ. Տ. Գրիգոր
Վարդապետ Խաչատրեանի օրհնութեամբ
Շարվիեո Շաւանիեոյի Սուրբ Նշան եկեղեցւոյ
հոգեւոր հովիւ Տէր Յուսիկ քիւյ Սարգսեանը

Նշանակուած է Լիոն քաղաքի Մարգարեան-
Փափագեան դպրոցի կրօնքի դասընթացի

պատասխանատու:

2024 թուականի սեպտեմբերէն Տէր Յուսիկը
պետք է կազմակերպէ 4 դասարաններու (2-
րդէն մինչեւ 5-րդ) կրօնական գիտելիքներու
դասաւանդումը՝ իրեն օգնական ունենալով
Վազգէն Էսկիճեան եւ Յակոբ Սապունճեան
սարկաւազները:

Մինչ այդ Տէր Յուսիկը կազմած եւ դպրոցի
տնօրինութեան ներկայացուցած է
իւրաքանչիւր դասարանի համար
նախատեսուած ծրագիր մը, որը հաւանումի
արժանացած է դպրոցի տնօրինութեան եւ
հովուական կոմիտէի կողմէն:

Ծրագրով նախատեսուած 120 նիւթերու շուրջ
այս պահուն միասնական ջանքերով կը

պատրաստուին երկլեզու դասընթացները՝